Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-880[3]-23.04.2010-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 115-րդ հոդվածում՝

1) հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 115. Դատարանի կողմից կիրառվող սանկցիաները».

2) 1-ին մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց, ներկայացուցիչների և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները.».

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ և երրորդ պարբերություններով՝

«Գործին մասնակցող անձանց նկատմամբ նիստերի դահլիճից հեռացումը կարող է կիրառվել ոչ ավելի, քան 36 ժամով, իսկ դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ՝ որոշակի ժամկետով կամ մինչև դատաքննության ավարտը:

Գործին մասնակցող՝ նիստերի դահլիճից հեռացված անձի փաստաբանի կամ այլ ներկայացուցչի հիմնավորված միջնորդությամբ դատարանն իրավունք ունի մինչև սանկցիայի կիրառման ժամկետը լրանալը վերականգնել հեռացված անձի մասնակցությունը դատական նիստին:»:

4) 6-րդ մասում «գործին մասնակցող անձանց, փաստաբան չհանդիսացող ներկայացուցիչների և դատավարության այլ մասնակիցների» բառերը փոխարինել

«գործին մասնակցող անձանց և փաստաբան չհանդիսացող ներկայացուցիչների» բառերով.

5) 7-րդ մասում «կիրառվում են բացառապես» բառերը փոխարինել «կարող են կիրառվել» բառերով.

6) 8-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Դատական տուգանք կիրառելու մասին առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի որոշումները կարող են բողոքարկվել հրապարակվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:».

7) 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Եթե դատարանը գտնում է, որ գործին մասնակցող անձը, ներկայացուցիչը կամ դատական նիստին ներկա գտնվող այլ անձը դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, որն առաջացնում է քրեական պատասխանատվություն, ապա դատավորը կարող է սույն հոդվածով սահմանված կարգով կարգազանց անձի նկատմամբ կիրառել դատական սանկցիա և պարտավոր է քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին:»:

Հոդված 2. Օրենսգրքի 222-րդ հոդվածի 3-րդ մասը «կասեցնելու» բառից հետո լրացնել «, ինչպես նաև դատական տուգանք կիրառելու» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ամփոփաթերթիկ

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրինագծերիի վերաբերյալ արված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը
Ստյոպա Սաֆարյան	Քր. դատ. օր. 314, Քաղ. դատ. օր. 115, Վարչ. դատ. օր. 93.1-րդ հոդվածներ: Դատական օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները դատավարական մյուս օրենսգրքերից հանել, քանի որ Դատական օրենսգիրքն ընդհանուր է բոլոր դատավարությունների համար:	Չի ընդունվել: Դատական օրենսգրքի ընդհանուր դրույթը փաթեթի մեջ մտնող օրինագծերով առանձին-առանձին կոնկրետացվել է դատավարական ընթացակարգերի երեք տեսակների համար, որպեսզի դատարանը այդ պահանջը ամեն անգամ կիրառի տվյալ կոնկրետ իրավահարաբերության վրա:

Ռ. Պետրոսյան